



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի  
օգնականների դասավանդման հմտությունների զարգացման  
ապահովում» ծրագիր

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Գավառի N 5 հիմն. դպրոց

Թեմա՝ Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների կիրառումը տարրական դասարաններում

Վերապատրաստող մենթոր՝ Գոհար Շահինյան

Ուսուցիչ՝ Օֆիկ Կոտուկյան

Գավառ 2023

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Գլուխ 1. Մանկավարժական տեխնոլոգիա հասկացությունը.....	5
1.1. Մանկավարժական տեխնոլոգիա, դասակարգումը և տեսակները.....	5
Գլուխ 2. Ուսուցման մեթոդներ, դրանց նկարագրությունը և կիրառությունը տարրական դպրոցում.....	12
Դասի պլանի օրինակ.....	14
Ինտեգրված դասի պլան.....	16
Եզրակացություններ.....	20
Գրականության ցանկ.....	21

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր կրթության մեջ էական փոփոխություններ են տեղի ունենում, որոնք ընդգրկում են մանկավարժական գործընթացի գրեթե բոլոր բնագավառները: Աշակերտի անձնական հետաքրքրությունը ուսումնական գործընթացի կարևոր գործոններից է: Ուսուցիչը պետք է իմանա, թե ինչպես պետք է ազդել երեխայի անհատականության վրա, ուսումնական գործընթացում որ տեխնոլոգիաները կիրառի նախատեսված արդյունքներին հասնելու համար: Բոլոր երեխաները չեն կարող նույն ձևով և նույն մեթոդով սովորել: Ուստի ուսուցչի ամենակարևոր դերը բոլոր աշակերտների համար ստեղծի այնպիսի բարենպաստ միջավայր, ուր նրանք կկարողանան սովորել: «Երեխան կարող է և չլինել նշանավոր գիտնական, բայց դառնալ ինքնուրույն մարդ, ով ընդունակ է վերլուծել իր արարքները, վարքը, ինքնակատարելագործվել, իրացնել իրեն շրջակա աշխարհում, նրան անհրաժեշտ է սովորել»:

Դասի դաստիարակչական բաղկացուցիչը պակաս կարևոր չէ, քան ուսումնականը, և այդ երկու բաղկացուցիչները փոխկապված են: Ինչպե՞ս երեխան կվարժվի կատարել իր աշխատանքը՝ ուսումը: Կլինի՞ արդյոք ուսումը հետաքրքիր նրա համար, կստիպի՞ մտածել, կարծիքներ արտահայտել: Այս ամենը և շատ այլ բան կախված է նրանից, թե դասի ժամանակ ինչ պայմաններ են ստեղծված սովորողի համար և ինչ մեթոդներով ու հնարներով է մատուցվում ուսուցանվող նյութը:

Նոր սերնդի ուսուցիչներից պահանջվում է, որ կարողանան հմտորեն ընտրել և կիրառել հենց այն տեխնոլոգիաները, որոնք համապատասխանում են կրտսեր դպրոցի ուսուցման բովանդակությանը և նպատակներին, նպաստում են աշակերտների ներդաշնակ զարգացմանը՝ հաշվի առնելով նրանց անհատական առանձնահատկությունները: Այս աշխատանքի արդիականությունը պայմանավորված է կրթական գործընթացում նորագույն տեխնոլոգիաների կիրառումով:

Հետազոտության նպատակն է.

- Պատկերացում տալ նորագույն մանկավարժական տեխնոլոգիայի համակարգի մասին, ներկայացնելով նրանց հնարավորությունները ուսուցման գործընթացում:
- Ինչպես են նորագույն տեխնոլոգիաները նպաստում սովորողների ստեղծագործական հմտությունների զարգացմանը, ստեղծագործական կարողունակությանը;
- Դիտարկել կրտսեր դպրոցում դասավանդումը նորագույն մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմամբ:

Այս նպատակին հասնելու համար աշխատանքում լուծվում են հետևյալ խնդիրները՝

- գնահատել տեխնոլոգիաների կիրառելիության մակարդակը ժամանակակից ուսուցման գործընթացում;
- աշակերտների մեջ ձևավորել նորարարական և ավանդական մանկավարժական համակարգերի վերլուծության կարողության զարգացում:
- ծանոթանալ տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորություններին կրթական գործընթացում:

# Գլուխ 1. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

## 1.1 Մանկավարժական տեխնոլոգիա, դասակարգումը և տեսակները

Նորագույն տեխնոլոգիաները նոր սերնդի մանկավարժական տեխնոլոգիաներ են, որը պարունակում է իրականացման և փուլերի որոշակի փաթեթ և ի տարբերություն ավանդական տեխնոլոգիայի, նորագույն տեխնոլոգիայի նպատակը այն է, որ կենտրոնացած է որոշակի արդյունքի ձեռքբերման վրա:

Նախ իմանանք ի՞նչ է տեխնոլոգիան: Տեխնոլոգիան հունարեն բառ է, որ նշանակում է գիտություն արվեստի և վարպետության մասին:

Տեխնոլոգիա բառն ինքնին տարբեր իմաստներ ունի: Օրինակ, ընդհանուր իմաստով դա որոշակի գործունեության իրականացման մանրամասն եղանակ է՝ հիմնված ընտրված մեթոդի վրա: 20-րդ դարի 60-ական թթ. մանկավարժության մեջ ներմուծվեց տեխնոլոգիա հասկացությունը:

Մանկավարժական տեխնոլոգիաները մանկավարժական գործընթացի կազմակերպման կարևորագույն մասն են կազմում, որոնք գործում են ուսուցման մեթոդների հետ միասին:

Մանկավարժական տեխնոլոգիան որևէ խնդրի քայլ առ քայլ լուծման հաջող փորձ է, արդյունավետ գործող համակարգ:

Մանկավարժական տեխնոլոգիան մանկավարժի արվեստն է, նրա հմտությունը, որը թույլ է տալիս նրան փոփոխել իրավիճակն ու դրությունը: Այսպիսով ինչ վերաբերվում է կրթական մանկավարժական տեխնոլոգիաներին, ապա նշում ենք, որ խոսքը ուսուցչի գործունեությունը այնպես կառուցելու մասին է, որ ներառում է խիստ հաջորդականությամբ կատարվող գործողություններ՝ կանխատեսելի արդյունքի պարտադիր առաջխաղացումով: Իսկ դասավանդման մեթոդը ներառում է ուսուցիչների կողմից օգտագործվող սկզբունքները և մեթոդները՝ խթանելու աշակերտների ուսուցման գործընթացը: Այս ռազմավարությունները կախված են մասամբ թեմայի բովանդակությունից և մասամբ՝ սովորողի բնույթից: Որպեսզի տվյալ մեթոդը լինի համապատասխան և արդյունավետ՝ այն պետք է առնչվի սովորողի առանձնահատկությունների և ուսուցման

նյութի հետ: Մանկավարժական տեխնոլոգիան համակարգված գործողությունների ծրագիր է, որն ուղղված է մի գործողության ստեղծմանը, կիրառմանը՝ հաշվի առնելով մարդկային և տեխնիկական ռեսուրսները: Մանկավարժական տեխնոլոգիան որևէ խնդրի լուծմանն ուղղված պլանավորված, նախօրոք մշակված հաջորդականորեն իրականացվող գործողությունների մի ծրագիր է, որևէ նպատակի ուղղված գործողություն: Այսպիսով՝ մանկավարժական տեխնոլոգիաներն ուղղված են կրթության որակի բարձրացման խնդրի լուծման, որն իրականացվում է ուսումնական հաստատությունում ուսուցման գործընթացի կազմակերպման նորագույն միջոցների օգնությամբ: Մանկավարժը պետք է կարողանա ընտրել հենց այն մանկավարժական տեխնոլոգիան, որը կոնկրետ իրավիճակում ավելի նպատակահարմար է, և գլխավորը՝ կարողանա ապահովել նրա իրականացման բարձր արդյունավետությունը: Այսպիսով՝ կարող ենք ասել, որ մանկավարժական տեխնոլոգիան դիտարկվում է որպես մանկավարժական գործունեության փուլերի, մեթոդների և միջոցների ամբողջություն, որն ուղղված է որոշակի մանկավարժական խնդիրների լուծմանը, ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպմանը: Տեխնոլոգիայի ընտրության ժամանակ շատ կարևոր է ինչ նպատակի համար և ինչ արդյունք ստանալու համար է այն իրագործվում: Մանկավարժական տեխնոլոգիաների ճիշտ տեղին և ժամանակին կիրառությունը կախված է ուսուցչի անհատական մոտեցումից, նյութի բնույթից, ինչպես նաև իրավիճակն օբյեկտիվ գնահատելու կարողությունից: Նորագույն կրթական տեխնոլոգիաների կիրառումը կարող է համարվել կրթության որակի բարձրացման հիմնական պայման՝ նվազեցնելով աշակերտների ծանրաբեռնվածությունը և ավելի արդյունավետ օգտագործել դասաժամերը:

Մանկավարժական տեխնոլոգիան ձևերի համակցություն է, մեթոդներ և կրթական միջոցներ, որոնք թույլ են տալիս հասնել սահմանված կրթական նպատակներին: Սա երեխայի զարգացման, կրթության գործընթացների վրա ազդելու միջոցներից մեկն է: Ժամանակակից մանկավարժական գործընթացի կազմակերպմանն առաջադրվող նոր խնդիրների լուծման նպատակով տարբեր որոնողական աշխատանքներ են իրականացվում, որոնք ուղղված են նոր մեթոդների, ուսումնադաստիարակչական

աշխատանքների կազմակերպման արդյունավետ ձևերի և տարբեր միջոցների ուսումնասիրությանը, փորձարկմանը և տարածմանը: Մանկավարժական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված չէ առանձին հնարներով, մեթոդներով, այլ միայն դրանց համալիր կիրառման համակարգով՝ մանկավարժական տեխնոլոգիաներով: Վերջին տասնամյակում կիրառվել են մանկավարժական բազմաթիվ տարբեր տեխնոլոգիաներ, որոնք օգտագործվում են ոչ միայն կրթական, այլ նաև ուսումնական աշխատանք կազմակերպելու համար:

Մանկավարժական տեխնոլոգիաներն ունեն իրենց դասակարգումներն ու տեսակները:

### **Համագործակցային ուսուցման տեխնոլոգիա**

Համագործակցային ուսուցման կիրառումը սկսվում է դեռևս անտիկ դարաշրջանից: Հռոմեացի փիլիսոփա Սենեկան ասում էր, որ սովորեցնողը կրկնակի է սովորում: Իսկ 17-րդ դարում Կոմենսկին հավաստում էր, որ սովորողները շահում են, երբ սովորում են ուրիշից, նաև երբ սովորեցնում են ուրիշի:

Համագործակցային ուսուցման հիմքում ընկած են հիմնականում երեք տեսություններ՝

- սոցիալական փոխկախվածության
- ճանաչողության զարգացման
- վարքագծային ուսումնառության

Վիգոտսկին ասում էր՝ գիտելիքին հատուկ է սոցիալական որոշակի բնութագիր, և ծնվում է ծագած խնդիրների ըմբռնման և լուծման ընթացքում գործադրած համատեղ ջանքերով: Նյութը վերապատմելու կամ վերաշարադրելու ընթացքում սովորողներն արդեն ձևավորված ճանաչողական կառուցվածքներում որոշակի փոփոխություններ են կատարում: Հետևաբար, ըստ Վիգոտսկու, մտավոր աշխատանքի լավագույն ձևը սովորածը ընկերոջը բացատրելն է: Իսկ Ջերոմ Բրուները մշակեց հետազոտական ուսուցման գաղափարը, որը շրջադարձային եղավ: Նա ներկայացնում է ճանաչողական ուսուցման մի մոդել, որտեղ տեղեկությունն անցնում է ընկալում-դասակարգում-յուրացում շղթայով և վերաճում գիտելիքի՝ հիմնվելով ոչ թե ինչ սովորելու, այլ ինչպես սովորելու սկզբունքի վրա: Վարքագծային ուսումնառության տեսության կողմնակիցները շեշտադրում են խմբային աշխատանքի արդյունքի խրախուսումը, որը որոշակի դրդապատճառ կամ շարժառիթ (մոտիվացիա) է դառնում ուսուցման գործընթացի համար: Սքինները մշակեց ծրագրավորված ուսուցման մի ձև, ըստ որի՝ ուսումնական նյութը բաժանվում է տրամաբանական հաջորդականություն ներկայացնող փոքրիկ մասերի՝ քայլերի:

Պատասխանելով համեմատաբար պարզ և հեշտ մի քանի հարցերի՝ աշակերտները խրախուսանք են ստանում, ինչը դառնում է ուսուցման գործընթացը շարունակելու և նյութն ամբողջությամբ յուրացնելու խթան: Խմբում սոցիալական փոխկապվածության գաղափարը ամբողջացրին ամերիկացի Ջոնսոն եղբայրները: Նրանք զարգացրին «Սոցիալական փոխկախվածության» տեսությունը՝ նշելով սոցիալական փոխկախվածության ազդեցությունը սովորողների նվաճումների, փոխհարաբերությունների, հոգեբանական առողջացման և սոցիալական զարգացման վրա՝ միջանկյալ փոփոխությունների միջոցով: Համագործակցային ուսուցման կարևորագույն ձեռքբերումներն են

- անձի զարգացումը և անհատականության ձևավորումը.
- հոգեբանական և ֆիզիկական առաջության ապահովումը.
- սթրեսի հաղթահարումը.
- շրջապատողների հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը:

Դասի բոլոր փուլերում պիտի ապահովվեն համագործակցային ուսուցման հետևյալ տարրերը՝

- դրական փոխկախվածություն.
- դեմ առ դեմ փոխազդեցություն.
- անհատական հաշվետվություն և պատասխանատվություն.
- միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանք ..

Համագործակցային ուսուցումն ակնկալում է ուսուցչի դերի փոփոխություն. Ուսուցիչն առաջնորդում և ուղղորդում է դասարանը՝ տեղեկություններ տրամադրողից և հրամայողից վերափոխվում է ուսուցման հրահանգչի՝ աջակցողի, դիտարկողի ստեղծելով փոխադարձ վստահության մթնոլորտ և համագործակցությունը խթանող միջավայր:

Համագործակցային ուսուցման ընթացքում ուսուցիչը ստանձնում է մեծ թվով պարտականություններ՝

- դասերի, վարժությունների, առաջադրանքների պլանավորում.
- սովորողների խմբերի ձևավորում.
- սովորողների տեղաբաշխում.
- առաջադրանքների կայացում, և բացատրում.
- խմբային աշխատանքի հսկողություն և անհրաժեշտության դեպքում միջամտություն.
- օգնություն սոցիալական հմտությունների զարգացման հարցում.
- գնահատում:

### **Համագործակցային դասի հիմնական կառուցվածքը**

#### **1. Ջերմացում**



2. Համագործակցային կառույց
3. Գնահատում և անդրադարձ

Դասի անցկացման 3 հիմնական փուլերն հետևյալն են.

1. **Ջերմացում՝** պատրաստվել սովորելու և համագործակցության(5-15րոպե)
  - Ուսուցիչը ներկայացնում է դասի թեման
  - Նա տալիս է խթանող հարց կամ թեմա գույգերով՝ իրար հետ խոսելու համար
  - Յուրաքանչյուրը մասնակցում է փոխազդելով(2-5րոպե)
  - Այս փուլում սովորողները ակտիվացնում են նախորդ գիտելիքները և ծնվում են նոր հարցեր կամ գաղափարներ
  - Ջերմացումն ավարտվում է մեծ խմբում անցկացվող քննարկումով
  - Նպատակի առաջադրում
  - Նպատակները կարող են դրվել ուսուցչի կողմից կամ ամբողջ խմբով համատեղ
2. **Համագործակցային ուսուցման կառուցում՝** հիմնված բովանդակության վրա(20-40րոպե)
  - Մտածիր մենակ-գույգվիր-կիսվիր
  - Առաջադրանք խմբերի համար և ներկայացում
  - Մեթոդների և հնարների օգտագործում
3. **Գնահատում** ինչպե՞ս հասանք մեր նպատակներին, ինչպե՞ս համագործակցեցինք (10-15րոպե)
  - Արդյունքները՝ ինչպիսի՞ն էր արդյունքը: Որոնք էին խմբերի տարբերությունները
  - Գործընթացը՝ ինչպե՞ս էինք համագործակցում: Ինչպե՞ս ընթացավ աշխատանքը:
  - Հետադարձ կապ խմբերի համար:

### **Զարգացնող ուսուցման տեխնոլոգիա**

Այս տեխնոլոգիան առավել ընդունված և տարածվածն է: Վիզուտակին ապացուցեց, որ մանկավարժությունը պիտի հիմնվի երեխայի զարգացման ոչ թե անցած, այլ վաղվա՝ եկող օրվա վրա: Միայն այդ դեպքում նա կարող է ուսուցման գործընթացում կյանքի կոչել զարգացման այն գործընթացները, որոնք տվյալ պահին գտնվում են մոտալուտ զարգացման տարածքում:

Վիզուտակին հասկանում էր, որ զարգացման որոշակի փուլում երեխան, մեծահասակի ղեկավարությամբ և առավել խելացի ընկերների հետ համագործակցելով, կարող է ուսումնական խնդիրներ լուծել: Զանկովին հաջողվեց տարրական դպրոցում անցկացված մանկավարժական փորձի հիմնան վրա ապացուցել, որ կարելի է արագացնել դպրոցականների զարգացումը ուսուցման արդյունավետության բարձրացման շնորհիվ:

Ձարգացնող ուսուցման գործընթացներում մանկավարժները նկատի ունեն սովորողների գիտակցական և իմաստավորված վերաբերմունքը ուսումնական գործունեության ընթացքում դրսևորվող սեփական գործողությունների, միջոցների, եղանակների հանդեպ:

Ձարգացնող ուսուցման տեխնոլոգիան մեծ արձագանք է գտել ուսուցչության շրջանում: Սակայն կան երեխաներ, որոնք չեն հաղթահարում դասարանի աշխատանքային տեմպը:

Այդ պատճառով էլ արագընթաց և բարդության բարձր մակարդակ նախատեսող ուսուցումը ոչ բոլոր սովորողներին է հասանելի :

### **Ուսուցման ավանդական (վերարտադրողական) տեխնոլոգիա**

Ավանդական ուսուցման նպատակը հիմնականում գիտելիքների հաղորդումն է, մասամբ էլ հմտությունների ձևավորումը: Այս տեխնոլոգիայի կիրառման դեպքում անտեսվում է կրթության ժամանակակից պահանջը՝ ապահովել անհատի համակողմանի և ներդաշնակ զարգացումը: Այս տեխնոլոգիան կիրառելիս հաշվի չի առնվում սովորողի անհատական ունակությունները, հետին պլան են մղվում ստեղծագործական ունակությունները:

Ավանդական ուսուցման տեխնոլոգիան շարունակվում է կիրառվել կրթական համակարգում և պահպանում է իր դերը գիտելիքի հաղորդման պարագայում այսօր կիրառելի են բազմաթիվ մանկավարժական տեխնոլոգիաներ՝ ավանդական և նորարարական: Մենք չենք կարող հստակ ասել որ պետք է հրաժարվել ավանդական տեխնոլոգիայից և օգտագործել նորարարական տեխնոլոգիաները, քանի որ դասավանդման լիարժեք դեղատոմս գոյություն չունի, որի դեպքում ոչ ոք չգիտի ինչ արդյունք կունենանք:

Ավանդական ուսուցման տեխնոլոգիան հիմնված է բացատրական – ցուցադրական մեթոդի վրա: Ավանդական ուսուցման ժամանակ դասը բաժանվում է երկու հատվածի՝ հին նյութի հարցում և նոր նյութի մատուցում: Այս գործընթացը կրկնվում է ամեն օր և սովորողը մի դասին հասցնում է առնվազն 2-3 անգամ լսել միևնույն նյութը, չհաշված որ ինքն այդ նյութը լսել է նաև նախորդ դասին, երբ ուսուցիչը հաղորդում էր նոր նյութը: Հենց այս ամենը ձանձրույթ է պատճառում ժամանակակից սովորողին, որը ակտիվություն է ուզում: Ավանդական ուսուցման կարևոր հենասյուններից մեկն էլ դասագիրքն է: «Դասագիրք» հասկացությունը մարդկային գիտելիքների չափանիշն է: Սակայն, ներկայիս համակարգչային ուսուցումը վերացնում է դասագրքային ուսուցման սահմանափակումները: Այն համաշխարհային քաղաքակրթության գանձարանն է: Դրանից օգտվող յուրաքանչյուր մարդ վերցնում է այնքան, որքան ցանականում է և կարող է:

Ինչպես ցանկացած տեխնոլոգիա, ավանդական ուսուցումը ևս ունի դրական կողմեր.

- Համակարգված ուսուցում,
- Կազմակերպչական պարզություն,
- Չանգվածային կրթության նվազագույն ռեսուրսների օգտագործում,
- Վերարտադրողականության զարգացում,

- Բանավոր ներկայացում:

Պետք չէ հրաժարվել ավանդական ուսուցումից, պարզապես պետք է աննկատելիորեն և ճիշտ համադրել նորարական մյուս տեխնոլոգիաների հետ և ուսուցման արդյունքը կլինի դրական:

### **Խաղային տեխնոլոգիա**

Խաղը կարևոր դեր ունի կրտսեր տարիքի երեխաների զարգացման, դաստիարակության, աշխարհընկալման, ուսուցման գործում: Խաղը երեխայի միակ և ամենասիրած զբաղմունքն է: 6 տարեկան երեխաների մուտքը դպրոց ենթադրում է ուսուցման մեթոդիկայի մեջ ներառել բազմազան խաղեր որոնք համապատասխան են այդ տարիքի երեխաների հեգեթանական առանձնահատկությունների և բավարարեն նրանց ուսումնական պահանջները: Տարրական դասարաններում անհրաժեշտ է ուսուցման գործընթացը կազմակերպել հաշվի առնելով կրտսեր դպրոցականների տարիքային և հեգեթանական առանձնահատկությունները: Իսկ 6-9 տարեկան երեխաները միայն ուսումնական գործունեությամբ զբաղվել դժվարանում են: Ուստի, անհրաժեշտ է նրանց ուսումնական գործունեությունը ընդմիջել դիդակտիկ, շարժում և դերային խաղերով կամ զուգակցել խաղը և ուսուցումը: Խաղը կրթությունը հանդես է գալիս որպես գիտելիքի յուրացման միջոց և մեթոդ: Խաղի միջոցով երեխաները ուշադրությունը սևեռում են դասապրոցեսին և նույնիսկ ամենադժվար, անհետաքրքիր ու ձանձրալի թեման սովորում են հեշտությամբ: Երեխաները խաղով տարված չեն նկատում, որ սովորում են, ճանաչում են նորը, կարողանում կողմորոշվել անսովոր իրադրության մեջ: Անզամ ամենապասիվ աշակերտներն մտնում են խաղի մեջ մեծ ցանկությամբ: Դասն արդյունավետ է, երբ ոչ թե դասարանն էլ յուրացել նյութը, այլ յուրաքանչյուր աշակերտ: Խաղի միջոցով ուսուցումը ոչ միայն նպաստում է երեխաների գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերմանը, այլև անհատականության ձևավորմանը ու զարգացմանը:

### **Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը**

Նյութը ավելի լավ ընկալելու համար դասավանդման ընթացում լայնորեն կիրառվում են տեղեկատվական տեխնոլոգիաները: Կրթությունը մեծ տեղ ունեն սահիկաշարքերի օգտագործումը: Այն նախապես պետք է կառուցված լինի դասի թեմային համահունչ: Դա ավելի հեշտ է կիրառել, քան անընդհատ գրատախտակին գրելը: Այն պետք է հնարավորինս պարզ և մատչելի պատրաստել: Տեղեկատվական տեխնոլոգիաները ինտեգրելով կօգնեն դասը ավելի արդյունավետ իրականացնելու համար:

## **Գլուխ 2 Ուսուցման մեթոդներ, դրանց նկարագրությունը և կիրառությունը տարրական դպրոցում**

Ուսումնական գործընթացի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է կիրառվող մեթոդներով: Մեթոդ-ը հունարեն բառ է, որ նշանակում է ինչ-որ տեղ տանող ուղի , ճանապարհ: Ուսուցման մեթոդները մանկավարժի և սովորողի համատեղ աշխատանքն է ուսումնական գործունեություն կազմակերպելու նպատակով: Ուսուցման գործընթացում լայնորեն կիրառվում են նաև «ուսուցման հնար կամ եղանակ» հասկացությունները: Ուսուցման հնարը կամ եղանակը այս կամ այն մեթոդի բաղկացուցիչ մասերից է: Ուսուցման մեթոդները և հնարները մանկավարժական որոշակի իրադրության պայմաններում կարող են փոխարինվել մեկը մյուսով: Ժամանակակից մանկավարժական պրակտիկայում մեծ թվով մեթոդներ են կիրառվում; Կրտսեր դպրոցում խոսքային մեթոդները կարևոր տեղ են գրավում: Սրանց շարքում պիտի դասել պատմությունը, բացատրությունը գրույցը, բանավեճը, դասախոսությունը, գրքով աշխատանքը:

Զննական մեթոդների դեպքում մեծ կիրառություն ունեն գանազան գծապատկերները, աղյուսակները, նկարները , մոդելները, սարքերը, տեխնիկական միջոցները:

Նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել: Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեդատոմ: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը: Կրտսեր դպրոցում ավելի հաճախ կիրառվող մեթոդներից են.

**Գուշակություն** Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական կարևոր հասկացությունները կամ վերնագիրը թերթիկների վրա գրել, կտրատել առանձին բառերի և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում: Դասը սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը:

**Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի (ԳՈՒՍ)** Դասը սկսելու շատ հայտնի հնար է նաև ԳՈՒՍ-ը: Դասակարգում ուսուցիչը գծում է M-աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Դասի թեման հայտնելուց հետո ուսուցիչը դիմում է աշակերտներին հետևյալ հարցով. ի՞նչ գիտեք այս թեմայի, հասկացության մասին: Ապա լրացվում է գիտեմ սյունակը: Հաջորդիվ աշակերտներին հարցնում է՝ ի՞նչ եք ուզում իմանալ այդ թեմայի մասին: Եվ լրացնում է ուզում եմ իմանալ սյունակը: Դասի վերջում լրացվում է սովորեցի սյունակը:

## **Մտագրոհ**

Դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկը մտագրոհն է: Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում՝ մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը: Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները: Վերջին տարիներին մասնագետները մտահոգություն են հայտնել մտագրոհի հետ կապված: Բանն այն է, որ դասերի ժամանակ ակտիվ աշակերտները մենաշնորհում են մտագրոհը: Դանդաղ մտածող, ոչ ակտիվ աշակերտները կարող են դուրս մնալ մտագրոհից: Դրա համար առաջարկվում է օգտագործել նաև մտագրոհի գրավոր տարբերակը: Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է թղթի վրա գրել իրենց մտքերը և հանձնել իրեն: Այս մոտեցումը չի փոխարինում բանավոր մտագրոհին: Պարզապես լրացնում է այն:

**Կիսատ նախադասությունների** լրացումն օգնում է աշակերտներին ամփոփել դասը: Իր ընտրությամբ, ուսուցիչը կարող է տալ այս նախադասություններից մի քանիսը կամ բոլորը՝ աշակերտներին հնարավորություն ընձեռելով իրենց ցանկությամբ ընտրել այն կիսատ նախադասությունները, որոնք կուզենան ավարտել:

**«Խաթարված հերթականություն»** Այս վարժությունը կնպաստի գիտելիքների և կարողությունների զարգացմանը. պետք է նախօրոք պատրաստել թղթեր, վրան գրել տեքստից ընտրված կարևոր անունները, փաստերը, իրադարձությունները: Դրանք խառը հերթականությամբ փակցնել գրատախտակին, հետո խնդրել, որ այն դասավորեն հերթականությամբ:

## **Միավորային գնահատման իրականացում Quizizz առցանց գործիքի միջոցով**

Այս ծրագրի օգնությամբ հնարավոր է իրականացնել սովորողների առցանց համաժամանակյա միավորային գնահատում: Գործիքն օգտագործելիս սովորողները պետք է իմանան համապատասխան 42 հարցման մուտքի կոդը: Սովորողները հարցադրումներին հետևում և պատասխանները նշում են տիրույթին միացված ցանկացած գործիքի (հեռախոս, համակարգիչ, պլանշետ) օգնությամբ: Հարցման ավարտին հնարավոր է MS Excel ֆորմատով ներբեռնել սովորողների միավորային գնահատականները:

## Դասի պլան

Դասարանը- I

Ուսուցչի անուն, ազգանունը Օ.Կոտոլկյան

Առարկան- Մայրենի

Թեման- Զինվորիկի երգը: Վանկ, բառ, բառակապակցություն:

Անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ-համակարգիչ, պրոյեկտոր

Նպատակը- աշակերտները.

1. Զարգացնել գիտելիքները զինվորի և երգի մասին
2. կարողանան վերարտադրել իրենց մտքերը ( զինվորների կատարած սխրանքների մասին)
3. կարողանան համապատասխան հնչերանգով արտասանել բանաստեղծությունը
4. ընկալեն տրված առածի և դարձվածքի իմաստները
5. ամրապնդեն բառ հասկացության մասին գաղափարը
6. արտահայտեն իրենց վերաբերմունքը հայ զինվորի և նրա անգնահատելի գործի վերաբերյալ:

Ընթացքը- ա) Խթանման փուլ

Անցկացնել նախապատրաստական զրույց՝ «Ո՞վ է զինվորը», «Ո՞վ է ուզում դառնալ զինվոր», «Ո՞ւմ ընտանիքում կա զինվոր», « Ի՞նչ են անում զինվորները», « Ի՞նչ զենքերի անուններ գիտեք», «Ո՞վ , ի՞նչ խաղալիք զենք ունի» և նման հարցերի շուրջ: »երեխաներին, ելնելով իրենց կենսափորձից, ներքաշել ակտիվ զրույցի շուրջ:

բ) Իմաստի ընկալում.

1. Ընթերցել բանաստեղծությունը, պատասխանել բնագրին կից հարցերին.
2. Երեխաների ուշադրությունը հրավիրել վերջին քառյակին.

Ես պստիկ եմ,  
Բայց ճստիկ եմ,  
Հայրենիքի  
Զինվորիկ եմ:

Ուսուցանել «Պստիկ է, բայց ճստիկ է» առածը: Հասկանալի դարձնել, որ լավ գործեր կարող են կատարել նաև փոքրերը: Բերել օրինակներ, ինչպես մարդկանց, այնպես էլ կենդանիների կյանքից;

3. Դիտել դասանյութի ներքևի հատվածում տեղադրված նկարները, մեկնաբանել նաև « փուշը մատից հանել» դարձվածքի փոխաբերական իմաստը, որը նշանակում է մեկին օգնել: (Պատմել իրենց Արցախին ցուցաբերած օգնության մասին):

Ֆիզկուլտ դադար

Ունկնդրել « Զինվոր եմ ես » երգը, քայլել երգի երաժշտության տակ:

4.Բառային աշխատանք ( աշխատանքը անցկացնել 4 համագործակցային խմբերով, խաղի միջոցով)

I խումբ- Բառերի վանկերը խառնվել են: Վերականգնի՛ր բառերը և գրի՛ր:

րե     հայ     տե     րոս  
պա     նիք  
հե     րազմ

II խումբ- Ճիշտ դասավորի՛ր բառերը և կազմի՛ր նախադասություն:

թիկունքին     Զինվորի     սերն     հայրենիքի     է:

III խումբ- Ճիշտ տեղադրի՛ր բառերը:

.....ել ունեմ Ձան  
Իմ..... գրպանում  
.....կարգին Տանկ  
....չի հանում: Ափսոս

IV խումբ- Հետևյալ բառերով կազմի՛ր բառակապակցություններ և գրի՛ր:

Հայրենիք, զինվոր, ծանոթ, ճստիկ, գնդացի, թշնամի:

գ) Կշռադատում- Սահկահանդեսի(սլալո) միջոցով ներկայացնել զինվորական կյանքից դրվագներ:

Օգտվել քառաբաժան մեթոդական հնարից, լրացնել աղյուսակը:

1. Ի՞նչ էիք տեսնում	3. Ի՞նչ զգացիք
---------------------	----------------

2. Ի՞նչ էիք լսում	4. Ի՞նչ կմաղթես նրանց
-------------------	-----------------------

## ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԻ ՊԼԱՆ

Ինտեգրված պարապմունքներն առանձնահատուկ նշանակություն ունեն կրթական գործընթացում: Այս պարապմունքները սովորական պարապմունքներից տարբերվում են այն առումով, որ այստեղ ամփոփվում, ամբողջացվում և ամրակայվում են անցած նյութի բովանդակությունը, վերարտադրելու աշակերտների կարողությունները:

Ամփոփիչ պարապմունքները նպաստում են նաև երեխաների միջև խաղային և խոսքային և փոխհարաբերությունների կայունացմանը, ինչպես նաև հիշողության, իմացական, հուզական ոլորտների զարգացմանը, գեղագիտական և էսթետիկ ճաշակի ձևավորմանը:

Ինտեգրված պարապմունքները ապահովում են աշակերտների ներդաշնակ զարգացումը, ապահովելով ուրախ, աշխույժ մթնոլորտ: Նման մթնոլորտում աշխատելը երեխային վստահություն է ներշնչում՝ արդեն իսկ ձեռք բերա գիտելիքներ հմտորեն կիրառելու լիարժեք:

Դասի պլան

Դասարան՝ - Երկրորդ

Առարկա՝ - «Ժողովրդական բանահյուսություն» թեմայի ամփոփում:


Նպատակները - Պատմելու կարողությունների զարգացում:

- Ժողովրդական բանահյուսության մասի ստացած գիտելիքների ամփոփում:



- Կատարել լստեղծագործ քայլեր (հորինել, խաղիկ, հանելուկ, աքրոստիկոս):
- Բեմականացնել և հեքիաթից որոշ հատված, կամ ներկայացնել մնջախաղ:
- Ծեփակերտել կամ նկարել հեքիաթի հերոսին («Իմսիրած հեքիաթը»):
- Խոսքը օգտագործել լորպեսմտածողության ակտիվացման միջոց, ձևավորել ճաշակ, մշակել վարքի չափանիշները:

### ԻՆՏԵԳՐԱԾ ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



## **ՄԱՅՐԵՆԻ**

Ծանոթանալ ժողովրդական բանավոր ստեղծագործություններին, այն արժեքներին, որոնք ստեղծել է ժողովուրդը: Զարգացնել տարբեր լժող. Բանահյուսության տեսակները (հեքիաթ, բանաստեղծություն, առակ, էպոս, հանելուկ, շուտասելուկ):

## **ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒ**

Կարողանալ գրավոր և բանավոր շարադրել մտքերը հերոսների մասին: Գրավոր և բանավոր խոսքում օգտագործել լեզվական գիտելիքները: Կատարել ստեղծագործական քայլեր՝ հորինել հեքիաթ, աքրոստիկոս, հանելուկ, խաղիկներ:

## **ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

Հիշատակել Եզրպոսին, Մ. Գոշին, Վ. Այգեկցուն, Ղ. Աղայանին որպես առակագիրներ: Ծանոթանալ հայ ժողովրդի հերոսական անցյալին, հայ մեծ գիտնական Մ. Մաշտոցի կյանքին գրերի գյուտին, որի շնորհիվ փրկվեցին ժողովրդի ստեղծածը:

## **ԹԱՏՐՈՆ**

Կարողանալ բեմականացնել ազատ և անկաշկանդ ցանկացած հեքիաթը կամ առակը, ճիշտ օգտագործել մնջախաղը, ինտոնացիան, մնջախաղը:

## **ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ - ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ**

Երգել «Խաղիկ-տաղիկներից» հատվածներ և կատարել լկատակերգ- պարեր. «Գելը եկավ, գեղ մտավ», «Վեր-վերի», «Խորոտ Աղձի» և այլն:

### ***ԿԵՐՊՈՒՄԵՆՏ***

Կարողանալ նկարագրողել հեքիաթները, հմտորեն ներկայացնելով հերոսներին համապատասխան ձևերով: Ծեփակերտե լ այդ հերոսներին՝ պատրաստելով տիկնիկներ:

### ***ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀՈ***

Ճանաչել մեզ շրջապատող ծառերը, բույսերը, կենդանիները, հայրենի բնությունը: Կարողանալ ճիշտ բնութագրել կենդանիներին, բույսերն ու շրջապատը:

### ***ԿՅԱՆՔԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆ***

Կարողանալ բոլոր դասերից վերցրած լավօրինակները կիրառել կյանքում՝ լինելով հանդուրժող, (բարեկիրթ, բարի, ազնիվ, շիտակ, աշխատասեր, հյուրասեր, քաղաքակիրթ, ինչպիսի ն խորհուրդ են տալիս առակներն ու ասացվածքները):

## Եզրակացություն

Ներկայացնելով մանկավարժական տեխնոլոգիաների գործընթացը, ծանոթանալով մանկավարժական տեխնոլոգիաների հնարավորություններին, գնահատելով տեխնոլոգիաների դերը, կիրառելության մակարդակը ուսուցման գործընթացում ավանդական և նորագույն տեխնոլոգիաների համեմատական վերլուծությունը ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Մանկավարժական տեխնոլոգիաների իրականացումը որոշվում է ուսուցչի մասնագիտական գործունեության անահատական ոճով.

Կատարում է ` հաշվի առնելով իր մասնագիտական իրազեկվածությունը, կարողություններ:

2. Ժամանակակից տեխնոլոգիաները, տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս կրթել ու դաստիարակել կյանքի պահանջների պատրաստ սերունդ, ազատ մտածող, ստեղծագործ, առանց բարդությունների, մրցունակ գիտելիքներ ունեցող և դրանք ազատ օգտագործող աշակերտներ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ափոյան Ա. Է., Համագործակցային ուսուցումը տարրական դասարաններում, Երևան 2014, 336-338 էջ
2. Խաչատրյան Ս. Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի 2006, 96 էջ
3. Մ. Սուքիասիան, Մանկավարժական տեխնոլոգիաների դերն ուսուցման գործընթացում, Երեվան ԵՊՀ հրատարակչություն, 2016
4. Պետրոսյան Հ. Հ., Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, 2010, էջ 121